

## Հ Ր Ա Վ Ե Ր

### 2009 թվականի գիտական և գիտատեխնիկական գործունեության ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) միջև կնքված պայմանագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական ծրագրերի մրցույթի

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) միջև 2009 թվականի հունվարի 20-ին կնքված «Գիտական համագործակցության մասին» պայմանագրի՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (Ֆրանսիա) հայտարարում են գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ փոխգործակցության ծրագրի բաց ՄՐՑՈՒՅԹ:

Մրցույթին մասնակցում են Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունները և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) միավորումները: Մրցույթն ընդգրկում է ճշգրիտ, բնական, հասարակագիտական և հումանիտար գիտությունների բոլոր բնագավառներում իրականացվող հիմնարար և կիրառական հետազոտությունները:

Ծրագրերի իրականացման ժամկետը՝ 01.10.2009թ. – 01.10.2011թ.

Ծրագրի բյուջեն սահմանափակ է և առավելագույնը կազմում է.

- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից՝ յուրաքանչյուր ծրագրի համար 5000 եվրոյին համարժեք դրամ, որից նվազագույնը 60% տոկոսը կտրամադրվի ճանապարհածախսի և օրապահիկ ծախսերի համար,
- Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) կողմից՝ յուրաքանչյուր ծրագրի համար 5000 եվրո, որից նվազագույնը 60 տոկոսը կտրամադրվի ճանապարհածախսի և օրապահիկ ծախսերի համար:

Ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտությունների համար անհրաժեշտ ապրանքների և (կամ) փոքր սարքավորումների ձեռքբերման համար նախատեսված է յուրաքանչյուր ծրագրի ընդհանուր ֆինանսական ծավալի առավելագույնը 40 տոկոսը:

Ծրագրերը ներկայացվում են ըստ [հավելված 1-ի](#)՝ համակարգչով (12 տառաչափով, 1 տողաչափ հեռավորությամբ)՝ չգերազանցելով 10 էջը: Ծրագիրը պետք է ներառի հետազոտության մանրամասն նկարագիրը, նպատակները, գործընկերների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պլանը և բյուջեն:

Ծրագրերը գնահատվում են անկախ փորձագետների կողմից՝ հաշվի առնելով ծրագրերի որակը, գիտական նորույթը, երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները, երիտասարդ կադրերի ներգրավվածությունը, ինչպես նաև Եվրոպական միության կադապարային ծրագրում համատեղ հանդես գալու հնարավորությունը:

Վերջնական որոշումը կկայացվի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի միասնական խորհրդի կողմից:

Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ղեկավարները ստորագրում են **Մտավոր սեփականության պաշտպանության մասին պայմանագիրը (հավելված 2)**:

Ծրագրերի իրականացումն ավարտելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացվում է կատարված աշխատանքների հաշվետվություն՝ այդ թվում ֆինանսական:

Ծրագրերի ընդունումը՝ 2009 թվականի ապրիլի 6-ից - մայիսի 29-ը՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակով (ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե, Օրբելի եղբայրների 22, էլ. փոստ՝ [info@scs.am](mailto:info@scs.am)):

Խորհրդատվությունը տրամադրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում:

Պատասխանատուներ՝

Լևոն Մարդոյան -	ԳՊԿ գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,
Գրետա Տոնյան -	ԳՊԿ գիտական կադրերի պլանավորման, որակավորման և հետազոտությունների աջակցության բաժնի պետ:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ՝

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

